



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 հունիսի 2019 թվականի թիվ 67-Ա

ք. Երևան

«ՑԱՅԳ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ

ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2019 թվականի մայիսի 06-ին հարուցված թիվ 3 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նազելի Բաղդասարյանը 2019 թվականի մայիսի 06-ին Հանձնաժողով է ներկայացրել դիմում՝ հայտնելով, որ Շիրակի մարզում բնակվող մի շարք քաղաքացիներից ստանում են բողոքներ առ այն, որ մարզային սփռում իրականացնող «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) «Ցայգ» հեռուստաձրագրի եթերում՝ ամենօրյա պարբերականությամբ, հեռարձակվում է կրոնական բնույթի հաղորդում, որը քաղաքացիների կողմից ընկալվում է որպես խտրականության և ստեղծության խոսքի քարոզ և խնդրել է ձեռնարկել միջոցներ հաղորդման բովանդակությունը պարզելու և «Ցայգ» հեռուստաձրագրի եթերում խախտում կատարելու փաստի վերաբերյալ միջոցներ կիրառելու:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով՝ 2019 թվականի մայիսի 06-ին Ընկերություն նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը 2019 թվականի մայիսի 06-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացնել 2019 թվականի ապրիլի 15-ից մայիսի 5-ը ընկած ժամանակահատվածում հեռարձակված եթերի ձայնագրությունները:

Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությունում Ընկերությունը հայտնել է, որ Ընկերության ծրագրային հիմքում եղել է բազմակարծության ապահովումը եթերում, ինչին Ընկերությունը հավատարիմ է մնացել հեռարձակման այս տարիների

ընթացքում: Ընկերությունը հայտնել է նաև, որ անկախ, ինքնաֆինանսավորման սկզբունքներով աշխատող ընկերություն է և ծրագրերում լավագույնս համադրում են անկախ տեղեկատվության հեռարձակումն ու վերլուծությունը՝ կրոնական, մշակութային, երաժշտական, ժամանցային, սոցիալական, հասարակական-քաղաքական, մարզական, կրթական-ուսումնական հաղորդումների հետ: Հեռուստահաղորդումների հիմքում ավելի շեշտադրված են համամարդկային արժեքները և Ընկերությունը չի հեռարձակում հաղորդումներ, որոնք դեմ են մարդու իրավունքներին, քարոզում են անհանդուրժողականություն և խտրականություն:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Հանձնաժողովը ուսումնասիրելով դիմում բողոքը, ներկայացված 2019 թվականի ապրիլի 15-ից մայիսի 5-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված եթերի ձայնագրությունները, պարզել է «Ցայգ» հեռուստածրագրի 2019 թվականի մայիսի 01-ին «Հայտնություն» հաղորդման ընթացքում քարոզիչն անդրադառնում է այլ կրոնների հիմնադիրներին՝ համեմատելով Քրիստոսի հետ և ընդգծելով վերջինիս հարություն առնելու գաղափարի կարևորությունը (հատվածի սկիզբը՝ 14:25:50):

Մասնավորապես քարոզիչը նշում է. «Իսլամի առաջնորդ Մուհամեդը՝ առաջին ահաբեկիչը, ահաբեկչության հիմնադիրը, ով 1000000 պարսիկների սպանեց իսլամը Պարսկաստանում հաստատելու համար, թաղված է «Կանաչ մզկիթի» տակ: Այլ կերպ ասած՝ այդ հոտած, փտած, գարշահոտ ոսկորների վրա մզկիթ են կառուցել: Մուհամեդը մեռավ, փտեց, ներկայումս գտնվում է դժոխքում: Պիտի Տիրոջ առջև դատաստանի կանգնի՝ Ճերմակ աթոռի դատաստանին, և այնտեղ պիտի հասնի ծնկի վրա՝ գետինը լիզելով, Հիսուսի առջև պիտի կանգնի, և քանի որ գրված է՝ ամեն լեզու պիտի դավանի, որ Հիսուս Քրիստոս Տեր է Հոր Աստծո փառքի համար, պիտի դատվի և պիտի նետվի ծծումբով այրված կրակի լիճը և հավիտյան այնտեղ պիտի մնա:

Ամեն տարի միլիոնավորներ գնում են Քոշինգար՝ Հնդկաստան: Այնտեղ մի կոթող կա, որ կառուցված է Բուդդայի այրված ոսկորների վրա, և այնտեղ գնում են պաշտամունքի համար: Բուդդան՝ մեռավ, փտեց ու գնաց...

Կոնֆուցիոսը, մեծ ուսուցիչ է եղել: Գերեզմանը գտնվում է Չինաստանի Քուֆու քաղաքում, Շանդոն նահանգում. Յունեսկոյի կողմից պատմական արժեքավոր վայր է համարվում: Բայց մեռած է, չէ՞, հոտած է, փտած է...

Միայն Տեր Հիսուսի գերեզմանն է պարապ, և նրանք, ովքեր գնացել են, այդ վկայությունն ունեն. մի տախտակ կա դրված, որի վրա գրված են հենց այն խոսքերը, որ հրեշտակը կանանց ասաց. – այստեղ չէ նա, այլ հարություն է առել...»

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նազելի Բադդասարյանը 2019 թվականի հունիսի 11-ին Հանձնաժողով ներկայացրել է դիմում՝ նշելով, որ «Ցայգ» հեռուստածրագրի կողմից հեռարձակվող «Հայտնություն» հաղորդման բովանդակությունը ուսումնասիրելով, քննարկում ունենալով շահագրգիռ կողմերի հետ, հարցի առնչությամբ գտնվել է կոնսենսուսային տարբերակ և խնդրել է առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ իր դիմումի համաձայն հարուցված վարչական վարույթը կարճել:

Սակայն, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է Ընկերության կողմից իրականացված իրավախախտումը, որը համապատասխանում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասի հատկանիշներին: Հանձնաժողովը անհրաժեշտ չի համարում կարճել վարչական վարույթը և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը՝ շարունակում է վարչական վարույթի գործընթացը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածը սահմանում է. «1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:

2. Կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից:»

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Սակայն նշված հաղորդումը կրոնական կարծրատիպեր է սահմանում, որը անչափահասների մոտ ձևավորում է թշնամանք տարբեր կրոնների վերաբերյալ: Անչափահասների աշխարհայացքը կրոնական շատ գաղափարների և արժեքների մասին դեռևս ձևավորված չէ և նշված հաղորդումը կարող է ուղղակի ազդեցություն ունենալ այն դիտող անչափահասների առողջության, մտավոր զարգացման և դաստիարակության վրա՝ հաշվի առնելով նաև այն փաստը, որ հաղորդումը հեռարձակվել է ցերեկային ժամերին:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները, բացառությամբ բաժանորդային հեռարձակման, կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ն:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովն իր որոշմամբ իրավասու է կիրառելու գրավոր նախազգուշացում կամ տուգանք:

Իսկ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածը սահմանում է.

«1. Սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, Հանձնաժողովն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների կրկնակի դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազուշացնում է խախտում կատարած հեռուստատառադիոընկերությանը՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:»

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասը սահմանում է. «15. Էրոտիկ բնույթի հեռուստատառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների եթեր հեռարձակումը ժամը 24.00-ից մինչև 6.00-ն ընկած ժամանակահատվածից դուրս, բացառությամբ բաժանորդային հեռարձակման՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»

Հանձնաժողովն առկա փաստերի ուսումնասիրմամբ հիմնավորված է համարում Հանձնաժողովի եզրահանգումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով, 58-րդ հոդվածի 1-ին մասով և 60-րդ հոդվածի 15-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆԶՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

21 հունիսի 2019թ.
ք. Երևան